ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«---» հունիսի 2011թ.** **N__-Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին *որոշում է.***

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայական) Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի կցակառույցները նվիրել կից հավելվածում նշված քաղաքացիներին՝ իրենց կողմից օգտագործվող մակերեսին համապատասխան։

2. Սահմանել, որ Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքի (կցակառույցի) նվիրաբերվող մակերեսները ենթակա են վերջնական ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ա. Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից «Տաթև ԿՔՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է կցակառույցի շինարարություն՝ շենքի սեփականատերերի միջոցների հաշվին: Երևանի քաղաքապետի 2007թ. նոյեմբերի 29-ի հ.5184-Ա որոշմամբ թողարկվել է նշված հասցեում գտնվող կցակառույցի զբաղեցրած հողամասի հ.7688-2007 գլխավոր հատակագիծը և կցակառույցի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.05.2008թ. հ.2518602 վկայականը):

Ա. Տիգրանյան փողոցի հ.38 շենքին կից կցակառույցն իրականացվել է շենքի սեփականատերերի միջոցների հաշվին, փաստացի օգտագործվում և տիրապետվում է նրանց կողմից:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՄՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՄԱՄՆԱՇԵՆՔԸ (ԿՑԱԿԱՌՈՒՅՑԸ) ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը (կցակառույցը) նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ